Կրթության զարգացման շարունակական գործընթացի մեջ ուրույն տեղ են գրավում քոլեջները, որոնք անհրաժեշտություն ունեն հատուկ առանձնացված ենթահամակարգերի ստեղծման՝ կրթահամալիր տանող ճանապարհին:
Կրթահամալիրի ստեղծման գաղափարն իր մեջ ներառում է արհեստագործական դպրոց-քոլեջ-բուհ համակարգը, որն ընդգրկելով նաև բուհական կրթական համակարգը, գյուղական համայնքներում կնպաստի համալիր կրթահամակարգի ձևավորմանը:

Բարեկամի ամուր ձեռքը

Կրթահամալիրն իր մեջ ներառելով նախադպրոցական համակարգը, հանրակրթական դպրոցը, արհեստագործական, քոլեջային համակարգի ծրագրավորված ուսուցումը, տարածաշրջանին հատուկ նաև բուհական մասնագիտությունների ուսուցումը, էապես կբեռնաթափի մայրաքաղաքը, կնպաստի երիտասարդությանը գյուղում պահելու խնդրին, կվերակենդանացնի գյուղը:

Այս ճանապարհին լույսի շող կարելի է համարել մեր սփյուռքահայ բարեկամի իրականացրած օգնությունը քոլեջային համակարգին՝ զարգացման, կատարելագործման, վերափոխման ճանապարհին:

Շուրջ մեկ տարի է Արարատի պետական քոլեջը բարեկամական կապեր է հաստատել ամերիկահայ բարերար Անուշավան Աբրահամյանի հետ: Բարեկամության արդյունքում գրանցվեին բավականին դրական քայլեր քոլեջի զարգացման ճանապարհին:

Երիտասարդ սերնդի համակողմանի դաստիարակությունը մեր ուսումնական հաստատության կարևորագույն խնդիրներից է: Այս գործում իր լավագույն դերակատարումն ունի «Անուշավան Աբրահամյան» կրթածրագիր-հիմնադրամի նախագահ Անուշավան Աբրահամյանը: Անձ, որի գործունեությունը միտված է իր հայրենիքի գյուղական համայնքներում զարգացնել կրթական համակարգը, հայ պատանիներին տեսնել բարոյական և հասարակական դաստիարակության նոր որակներով զինված, լուսավոր նոր փուլ բացել մեր ազգի բազմադարյա պատմության մեջ:

Մենք խոնարհվում ենք հայ ժողովրդի նման պանծալի զավակների առջև և ողջունում նրանց մուտքը կրթասպարեզ և մեր երախտիքի խոսքը հայտնում, որ նրանք հոժարակամ, պատրաստակամորեն ոչինչ չաեն խնայում մեր ազգի զավակների կրթության, կրթական միասնական ծրագրերի իրականացման, քոլեջային համակարգի զարգացման գործընթացը գյուղական վայրերում պահպանելու, ծաղկեցնելու, «հայ նահապետական օջախի ծուխը վառ պահելու գործում»:

Այս տարի «Անուշավան Աբրահամյան» հիմնադրամի ջանքերով հունիս ամսից Արարատի պետական քոլեջում իրականացվեցին տանիքի փոխման աշխատանքները: Ծրագիրը Մինչև ձմեռամուտ ներառում է նաև բազում այլ խնդիրներ՝ այս տարի անպայման նաև լոկալ ջեռուցման համակարգի անցկացում, եկող տարվա ընթացքում մարզամշակութային համալիրի ստեղծում և դրան զուգահեռ՝ արհեստագործական մասնագիտությունների ուսուցման խնդիրը, որի համար հիմնադրամը քոլեջում ստեղծելու է կաբինետների համակարգ, արհեստանոցների համալիր՝ հագեցած նորագույն տեխնիկական միջոցներով և անհրաժեշտ ուսումնամեթոդական պարագաներով, զննական միջոցներով, անհրաժեշտ գույքով:

Ծրագիրն իր մեջ ներառում է նաև քոլեջի մասնաշենքի կարգավորման, ներքին հարդարման, վերանորոգման աշխատանքների համալիր իրականացում:

Պրն Աբրահամյանն իր ամենօրյա հոգատարությունն է ցուցաբերում նաև քոլեջում կազմակերպվող և անցկացվող միջոցառումների ժամանակ: Անցած տարի աշնանը և գարնանը նա մեր հյուրն է եղել իր հարգարժան տիկնոջ՝ Օֆելյա Աբրահամյանի հետ միասին:

Այսօր նա կրկին Հայաստանում է: Հավատարիմ իր պապերի ու ծնողների սուրբ ձգտումներին, հայրենասիրական զգացումներում դաստիարակված հայորդին ևս մասնակցում էր « Հայաստան-սփյուռք» կապի տնտեսական հարցերի քննարկումների աշխատանքներին՝ Հաաստան աշխարհը կայացած տեսնելու առաքելությամբ:

Ցանկալի է, որ մեր ազգի նման հայրենանվեր զավակները շատ լինեն և իրենց ներդրումն ունենան անկախացած հայ ժողովրդի և համայն Հայաստան աշխարհի կրթության և գիտության զարգացման գործում:

Գոհար ԹԱՄՐԱԶՅԱՆ
Արարատի պետական քոլեջի դասախոս